ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՆԶՊ ԵՎ ԱԿ

ՄԱՍՆԱԿԻՑ՝ 27 հիմնական դպրոցի զինղեկ
գնդապետ ՄԱՆՈՒԿ ՌՈԲԵՐՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ փոխգնդապետ Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԹԵՄԱ՝ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Ռազմարվեստի պատմության դասվանդման մեթոդները
Եվ դրա արդիականությունը արդի
ժամանակներում……4

Եզրակացություն,առաջարկություն……..…..13

Օգտագործված գրականության ցանկ ……15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ռազմական գործը ներկա է մարդկության ամբողջ պատմության ընթացքում, քանզի ռազմական գործը շոշափել է մարդկության արմատական շահերը: Մ.թ.ա. 3600 թվականից մինչև մ.թ. 1980-ական թվականն ընկած ժամանակահատվածի ընթացքում տեղի է ունեցել մոտավորապես 1455 պատերազմ, այդ թվում երկու համաշխարհային պատերազմ, որոնց ընթացքում սպանվել է, սովից և համաճարակից մահացել է ավելի քան 3,6 միլիարդ մարդ: Ռուս գիտնական Ն.Պ. Միխնևիչի հաշվարկներով՝ մարդկության պատմության ընթացքում ամբողջ մարդկության խախաղ կյանքի մեկ տարվան բաժին է ընկել պատերազմի միջին հաշվով 13 տարի.Կոնֆլիկտները հասարակության (պետության) ներսում և հասարակությունների ու պետությունների միջև ծագել են մարդկային հասարակության զարգացման բոլոր փուլերում և որոշակի ազդեցություն են գործել նրա զարգացման վրա: Ռազմական գործը հասարակության մեջ սկսել է մշակվել այնպես , ինչպես և մարդկանց բոլոր մնացած զբաղմունքները, որոնք ուղղված են նախ և առաջ, կենսական կարևոր այնպիսի գործառույթների պահպանմանը, ինչպիսիք են կյանքի, տոհմի ազատության պահպանումը: Այս կամ այն պետությունում կամ հասարակութունում, որոշակի պատմական դարաշրջանում ռազմական գործի կազմի, զարգացման և բովանդակության վրա ազդել են բազմաթիվ գործոններ, նախ և առաջ այնպիսիք, ինչպիսիք են պետության սոցիալական և քաղաքական կարգը, արդյունաբերական արտադրության զարգացման մակարդակը, գիտության և կրթության զարգացման մակարդակը, բնակչության մշակութային ավանդույթները, պետությունում հասարակության հոգևոր վիճակը: Ընդհանուր առմամբ ռազմական գործի բովանդակությունը զարգացման և կատարելագործման հիմական ուղղությունները ցանկացած պետությունում ունեն ընդհանուր գծեր, որոնք բխում են համաշխարհային զարգացման օբյեկտիվ օրինաչափություններից: Դրա հետ միասին նրանք ունեն նաև էական տարբերություններ , որոնք պայմանավորված են պետության աշխարհագրական դիրքով , ազգաբնակչությամբ, տնտեսական գործունեությամբ, արտաքին սպառնալիքների բնույթով: Ռազմական գործն սկսում

է էական դեր խաղալ շատ էթնո-մշակութային կազմավորումների սոցիալ-քաղաքական կյանքում զանազան պատճառներով. դա պայքար էր կենսական տարածության համար, տարածքի համար, կամ էլ ռազմական դառնում էր գործունեության տեսակ , որի դեպքում հնարավոր էր դառնում այս կամ այն մշակութա-պատմական ընդհանրության բարօրության աճը (կամ համենայն դեպս, այդ ընդհանրության մի մասի բարօրության աճը), նաև եղել է եկամտի աղբյուր և վերջապես գոյատևման միջոց՝ էթնոսի համար ծայրահեղ իրավիճակներում: Հին Եգիպտոսում, Հին Հունաստանում, Հին Հնդկաստանում, Հին Չինաստանում, իսկ ապա և Հին հռոմում հայտնվել են ռազմական գործի վերաբերյալ տեսական աշխատություններ, որոնց առանձին դրույթներն առ այսօր չեն կորցրել իրենց կարևորությունը: Ներկայացված դիտարկումների հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ դպրոցներում ռազմարվեստի պատմության դասավանդումն ունի կարևոր նշանակություն, քանի որ նպաստում է սովորողների կրթական դաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև սովորողների մեջ ձևավորվում է պետական մտածողություն և հայրենասիրություն: Հետևաբար , շարադրված հանգամանքներով էլ պայմանավորված է սույն թեմայի ուսումնասիրության արդիականությունը:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և վերլուծության ենթարկել ռազմարվեստի պատմության դասավանդման մեթոդները: Շարադրված նպատակով էլ պայմանավորված է սույն աշխատանքի հետևյալ խնդիրները՝ ա/ուսումնասիրել և ներկայացնել ռազմարվեստի դասավանդման առանձնահատկությունները, բ/վերլուծության ենթարկել ռազմարվեստի դասավանդման մեթոդները և նարկայացնել դրանց կիրառման ոլորտում առկա հիմնախնդիրները:

ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ռազմական գործը Ռուսաստանում, իսկ նրան հետևելով, նաև Հայաստանում հանդիսանում է մի տերմին, որը լայն ըմբռմամբ ներառում է ռազմական

տեսության և ռազմական պրակտիկայի (գործունեության) բոլոր հարցերը, որոնք կապված են խաղաղ և ռազմական ժամանակ պետության զինված ուժերի շինարարության (բանակաշինություն), նախապատրաստման և գործողությունների հետ, ինչպես նաև պատերազմի դեպքում բնակչության նախապատրաստման հետ: Ռազմական գործն իր մեջ ընդգրկում է հետևյալ բաղադրիչները.

- **Ռամական շինարարություն** կամբանակաշինություն-այսինքն՝ ռազմական գործի այն մասը, որը ներառում է աշխարհում և տվյալ երկրում ներքին արտաքին պայմաններին համապատասխան պետության զինված ուժերի կառուցման (կազմավորման և բարեփոխման), գործընթացը, պետության ռազմական կազմակերպության ստեղծման կազմակերպության և կատարելագործման տնտեսական , սոցիալ-քաղաքական, ռազմական և այլ փոխկապակցված միջոցառումները.
- **Ռազմական կառավարում**-այսիքն՝ պետության կառավարման այն բաղկացուցիչ մասը, որը վերաբերում է խաղաղ և ռազմական ժամանակ զինված ուժերի, զորքերի, ուժերի նախապատրաստմանը և կառավարմանը և բնակչության նախապատրաստմանը պատերազմի պարագայում.
    - Ռազմական կառավարում (զորքերի կառավարում, ուժերի կառավարում).
    - Բնակչության ռազմական պատրաստություն.
        - Նախնական ռազմական պատրաստություն.

      Պետության զորահավաքային հնարավորությունների նախապատրաստում, պահեստազորայինների նախապատրաստում և զորահավաք:
- **Ռազմական իրավունք**-իրավունքի այն ճյուղը , որը լայն ըմբռմամբ ընդգրկում է բոլոր այն իրավական հարցերը, որոնք առնչվում են ռազմական գործին, ամրագրում են զինված ուժերի գոյության, գործունեության սկզբունքներն ու ձևերը, կարգավորում են զինված ուժերի կառուցման , կյանքի կենցաղի և գործունեության բնագավառում գոյություն ունեցող հարաբերությունները և որոշում են զինծառայողների, զինապարտների և հասարակության այլ

մասնակիցների իրավունքներն ու պարտավորությունը, ռազմական գործի ոլորտում հարաբերությունները:

- Խաղաղ ժամանակվա փոատաթղթերը (օրենքները).
  - Ռազմական դոկտրինը-ռազմական անվտանգության անվտանգության պատության քաղաքականության մասին հռչակագիրը. պետության ղեկավարության այն պաշտոնական հայացքների դրույթների համակարգը , որը սահմանում է խաղաղ և պատերազմական ժամանակում պետության նախապատրաստման և գործողությունների , ռազմական շինարարության ուղղությունը.այլ կերպ ասած՝ Ռազմական դոկտրինը(военная доктрина,military doctrine) հիմնարար սկզբունքների համակարգ է, որոնցով ի շահ ազգային նպատակների առաջնորդվում են ՀՈՒ-ն կամ նրա որևէ

    Մասը, պետություններում (պետությունների դաշնադրությունում) քաղաքական նպատակներով օգտագործվող ռազմական բռնության միջոցների օգտագործման , ռազմական խնդիրների բնույթի ու դրանց լուծման եղանակների, ռզամական շինարարության հիմնական ուղղությունների վերաբերյալ տվյալ շրջանի համար ընդունված պաշտոնական տեսակետների համակարգ է.
- Ռազմակն ժամանակվա փաստաթղթերը (օրենքները).

- **Ռազմական քաղաքականությունը-** պետության և նրա հաստատությունների, ինչպես նաև կուսակցությունների և այլ սոցիալ-քաղաքական հաստատությունների ընդհանուր քաղաքականության բաղկացուցիչ մասն է. Որն անմիջականորեն կապած է ռազմական կազմակերպվածքի ստեղծման, զինված բռնության միջոցների պատրաստման ու քաղաքական նպատակներով կիրառման հետ.
- **Ռամական տնտեսություն-** պետության տնտեսության առավել կարևոր և զարգացած բնագավառը, որը լայն ըմբռմամբ ընդգրկում է ռազմական

գործի բոլոր տնտեսական հարցերը, ապահովում է պետության ռազմական (պաշտպանական) ներուժը.

- **Ռազմական արտադրություն**- պետության արտադրության (արդյունաբերության) բնագավառը, որը հանդիսանում է այն բոլոր գիտահետազոտական , փորձարարական հիմնարկությունների, կազմակերպությունների և արտադրական ձեռնարկությունների ամբողջությունը, որոնք կատարում են պետության զինված ուժերի և այլ ուժային կառույցների համար սպառազինության , ռազմական և հատուկ տեխնիկայի ու այլ գույքի մշակում, փորձարկում, արտադրություն և ուտիլիզացում.

- **Զինված ուժերի թիկունք**- պետության զինված ուժերի բաղկացուցիչ այն մասը արն ապահովում է զինված ուժերի դրված խնդիրները.
- **Ռազմարվեստ (ռազմական արվեստ)**- ցամաքում, ծովում և մերձերկրյա տարածությունում ռազմական գործողությունների, մարտական գործողությունների նախապատրաստման և վարման տեսությունն ու պրակտիկան է, ռազմական գործի բաղկացուցիչ մասը. Ռազմարվեստի տեսությունը ռազմական գիտության մասն է: Ռազմարվեստն ընդգրկում է ռազմավարությունը, օպերատիվ արվեստը, մարտավարությունը, որոնք սերտ կապված են միմյանց: Ռազմարվեստի հիմնական դրույթներն արտահայտվում են իր սկզբունքներում, որոնք ընդհանուր են թե ռազմավարական, թե օպերատիվ և թե մարտավարական մասշտաբի ռազմական գործողությունների համար, քանզի նրանցում իրենց արտահայտությունն են գտնում պատերազմի և զինված ուժերի օբյեկտիվ օրենքների գործնական կիրառման ուղիները: Ռազմարվեստի վիճակը կախված է պետությունում ռազմական գործի , պաշտպանական արտադրության և զինված պայքարի միջոցների զարգացման մակարդակից, պետության հասարակարգի բնույթից: Ռազմարվեստի զարգացման վրա ազդեցություն են գործում պտմական և ազգային առնաձնահատկությունները, աշխարհագրական պայմանները և ռազմական տնտեսությունը:

- **Ռազմական գիտություն,** ռազմագիտություն կամ գիտություն պատերազմի -գիտության մի բնագավառ է , որն իրենից ներկայացնում է պետությունները, պետությունների դաշնախմբերի կամ դասակարգերի կողմից՝ քաղաքական նպատակներին հասնելու համար պատերազմի նախապատրաստման և վարման վերաբերյալ գիտելիքների համակարգ. Ռազմական գիտությունը հանդիսանում է ռազմական գործի բաղկացուցիչ մասերից մեկը:
    - Ռազմական տեսություն
        - ՌԱզմական ռազմավարություն կամ ռազմական ստրատեգիա (ռազմական արվեստի տեսություն)- գիտություն է համաշխարհային մասշտաբով ռազմական գործողությունների (պատերազմի) վարման մասին, ռազմարվեստի բնագավառներից մեկը. ընդգրկում է ռազմական գործողություններին նախապատրաստության տեսության և պրակտիկայի հարցերը (պատերազմին), դրանց պլանավորումն ու վարումը.
        - Օպերատիվ արվեստ (Օպերատիվ արվեստի տեսություն)- ռազմաբեմի մասշտաբով ռազմական գործողությունների վարման մասին գիտություն, որը հանդիսանում է ռազմարվեստի (ռազմական արվեստի) բաղկացուցիչ մասը, զբաղեցնում է միջանկյալ դիրք մարտավարության և ռազմական ռազմավարության (ռազմական ստրատեգիայի) միջև: Ուսումնասիրում է խոշոր ռազմական կազմավորումների , այսինքն՝ բանակային կորպուսների , միավորումների, բանակների, բանակախմբերի, ռաամաճակատների, ռազմաճակատների խմբերի , ռազմավարական նշանակության հրթիռային զորքերի կողմից համատող և ինքնուրույն ռազմական օպերացիաների (մարտական գործողությունների)նախապատրաստության և վարման մեթոդները:

- Մարտավարության տեսություն, մարտավարություն (հին հունարեն taktikos <<զորքերի շարվելուն վերաբերվող>>taksis <<շարք և տեղաբաշխում բառերից>>)-<<զորքերի շարմանը վերաբերվող>>)-տեսական և գործնական գիտություն է , ռազմարվեստի բաղկացուցիչ մասը, որը ընդգրկում է զինված ուժերի դրանց տեսակների , զորատեսակների (ուժերի) և հատուկ զորքերի զանազան զորամիավորումների (բրիգադ, դիվիզիա, բանակային կորպուս) զորամասերի (նավերի) և ռազմական ստորաբաժանումների կողմից ցամաքում, օդում ու տիեզերքում մարտի նախապատրաստման և վարման պրակտիկան: Մարտավարության տեսությունը կամ մարտավարությունը՝ տակտիկան , հանդիսանում է ռազմատեսական գիտաճյուղ: Այն ընդգրկում է մարտական գործողությունների բոլոր տեսակների, այսինքն՝ հարձակման, պաշտպանության, հանդիպական մարտի, անև մարտավարական վերախմբավորումների և այլնի ուսումնասիրումը, մշակումը և նախապատրաստումը:
- Ռազմաինժեներական արվեստ (հանցած ձևը՝ ռազմաինժեներական գործ) կամ ռազմաճարտարագիտական արվեստ-ռազմարվեստի (ռազմական արվեստի) այն մասը , որն ընդգրկում է զինված պայքարի նախապատրաստության և վարման ինժեներական (ճարտարագիտական) ապահովման տեսությունն ու պրակտիկան , մասնավորապես՝ ռազմական օբյեկտների, հաղորդակցության ուղիների, ամրությունների և կամուրջների նախագշումն ու շինարարությունը, զորքերի ապահովումը ջրով, էներգիայով և օժանդակ միջոցներով, յուրային զորքերի առաջխաղացման դյուրացման և հակառակորդի զորքերի առաջխաղացման խոչընդոտման նպատակով սովորական պայթուցիկ նյութերի, այդ թվում ականների կիրառումն ու վնասազերծումը, ինչպես նաև

ինժեներական ապահովման այլ հարցերը: Բացի այդ, ռազմաինժեներական արվեստի մեջ են մտնում նաև վերոհիշյալ խնդիրների համար անհրաժեշտ սարքավորման, այդ թվում քողարկման ու ծածկման , ապաստարանիային միջոցների նախագծումն ու մշակումը:

- Ռազմածովային արվեստը- ռազմարվեստի (ռազմական արվեստ)այն մասը, որն ընդգրկում է ծովում զինված պայքարի նախապատրաստման և վարման տեսությունն ու պրակտիկան: Ռազմածովային արվեստը կազմված է ռազմածովային նավատորմի ռազմավարական օգտագործումից, օպերատիվ արվեստից և ռազմածովային նավատորմի մարտավարությունից:

- Ռազմական կառավարում և ռազմական շինարարության տեսությունն-իրենից ներկիայացնում է մարտական գործողությունների ժամանակ զինված ուժերի, զորքերի և ուժերի ղեկավարման , ինչպես նաև խաղաղ ժամանակ նրանց կենսագործունեության կառավարման շինարարության էության օրինաչաձությունների, սկզբունքների, ձևերի և եղանակների մասին գիտական գիտելիքների համակարգ:
- Զորահավաքային պատրաստություն կամ մոբիլիզացիոն պատրաստություն,
- Ամենօրյա գործունեության կազմակերպում,
- Ռազմական պատմություն –աշխարհի պետությունների և ժողովուրդների զինված ուժերի և ռազմական կազմավորումների ծագման, շինարարության և գործողությունների մասն գիտություն.

Մեծ Բրիտանիայում, մասնավորապես՝ Անգլիայում, ինչպես նաև անգլոսաքասոնական աշխարհի այլ երկրներում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, (անգլ.՝Military scince) իրենից ներկայացնում է ռազմական հզորության ստեղծման նպատակով պետության ազգային պաշտպանական քաղաքականության իրականացման գործընթացը, որին ներգրավվում են ռազմական գիտնականները, այդ թվում ՝ տեսաբանները, հետազոտողները, փորձարար գիտնականները, կիրառական գիտնականները, կոնստրուկտորները, փորձեր կատարող

ինժեներները կամ ճարտարագետները, ինչպես նաև այն զինծառայողները, որոնք պատասխանատու են սպառազինությունների նախատիպերի ստեղծման համար:

Վերոգրայլի հիման վրա կարող ենք նշել, որ դպրոցում սովորողների կրթության ու դաստիարակության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից կարևոր նշանակություն ունիռազմարվեստի դասավանդումը:

Դպրոցում ռազմարվեստի դասավանդման նպատակն է սովորողներին ներկայացնել հայ ռազմարվեստի պատմության առանցքային նշանակություն ունեցող դրվագները: Դասընթացի ավարտին ավարտին սովորողն ունակ կլինի՝ ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. Մեկնաբանելու հայ ռազմարվեստի առանձնահատկությունները: 2. Վերլուծելու հայոց բանակի կազմավորման անհրաժեշտությունն ու դերը: գ. Ընդհանրական/փոխանցելի կարողություններ 1. Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը: 2.Աշխատել թիմում:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնադրույք(ներ)ը.

Դասընթացի հաջող ավարտին սովորողն ունակ կլինի.

Ա1. Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:

Ա2. Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:

Բ7.Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու և բանավիճելու ակադեմիական միջավայրում: Գ2.Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը: Գ4. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագիր , ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Ռազմարվեստի պատմության դասավանդման ժամանակ կիրառվում են դասավանդման ու ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները: 1.Դասախոսություն 2. Սեմինար 3.Քննարկումներ 4. Զեկուցումներ: Շարադրվածի

հիման վրա կարող ենք նշել, որ ռազմարվեստի դասավանդման համար կարևոր նշանակություն կարող է ունենալ հետևյալ մեթոդների կիրառումը:

1. Մտքի գրոհ: Մտքի գրոհը մասնակիցների գաղափարների ազատ արտահայտումը խթանելու միջոց է: Այն ուսուցման կարևոր եղանակ է, քանի որ խրախուսում է մասնակիցներին նոր գաղափարներ արտահայտել՝ առանց քննադատության վախի: Մտքի գրոհի ընթացքում դասվանդողն առաջարկում է մասնակիցներին հնարավորինս շատ մտքեր արտահայտել՝ այդ մտքերի վերաբերյալ գրառումներ կատարելով գրատախտակի վրա: Դասավանդողը պետք է գրառի այն մտքերը, որոնք սխալ կթվան: Եթե պատասխանները ցույց տան, որ հարցը պարզ չի եղել, ապա այն պետք է վերաձևակերպվի: Դասը վարողները պետք է հետաձգեն հնչած առաջարկությունների քննադատությունները մինչև բոլոր մտքերի գրառումն ավարտելը: Այնուհետև, առաջարկությունները կարող են ենթարկվել քննադատության և, անհրաժեշտության դեպքում , դրանք կարող են դասակարգվել՝ ըստ առաջնահերթության:
2. Դասակարգման վարժություններ: Դասասակարգման վարժությունների շրջանակում մասնակիցները կատարում են ընտրություն՝ մի քանի մրցող այլընտրանքային տարբերակներից: Դասը վարողը կարող է օգտագործել մտքի գրոհի արդյունքում մասնակիցների մտքերի հիման վրա կազմված ցանկը կամ մասնակիցներին տրամադրել դասակարգման ենթակա այլ ցանկ, որը ներառում է օրինակ՝ դասակարգման ենթակա 5 կամ 10 տարր: Այնուհետև , մասնակիցները պետք է դասակարգեն այդ տարրերը 1-5 կամ 1-10 բալային սանդղակով՝ ամենակարևեր տարրը գնահատելով 1, իսկ սակավ կարևորություն ունեցող տարրը՝ 5 կամ 10 բալ: Դասակարգման վարժության շրջանակում մասնակիցներին կարող է հանձնարարվել նաև որոշակի հայեցակարգի կամ պնդման վերաբերյալ հայտնել իրենց կարծիքները: օրինակ՝ մասնակիցներին կարող է հանձնարարվել նշել, թե արդյոք որոշակի վարքագիծ ժողովրդավարական է ՝ գնահատելով այն <<լիովին համաձայն եմ>> և << լիովին համաձայն չեմ >> միջակայքում: Այնուհետև մասնակիցները պետք է հնարավորություն ունենան պատճառաբանել իրենց

դասակարգումը, լսել իրենց տեսակետների հետ անհամաձայնություն հայտնած մասնակիցներին և վերանայել իրենց կարծիքը՝ հիմնվելով տեղի ունեցած քննարկումների վրա: Նրանք կարող են կատարել դա սանդղակում իրենց կատարած նշման տեղափոխման միջոցով:

3. Քննարկում փոքր խմբերում: Փոքր խմբերում քննարկումները պետք է մանրակրկիտ կերպով նախապատրաստվեն՝ դրանց անցկացման կարգի և հատկացված ժամանակի մասին հստակ ուղեցույցների հիման վրա: Խմբերը , սովորաբար , պետք է բաղկացած լինեն նաև մինչև հինգ անձից, որպեսզի ապահովված լինի մասնակիցներից յուրաքանչյուրի խոսելու հնարավորությունը: Խմբերը պետք է համարակալվեն դասը վարողի կողմից (օրինակ 1-ից 5) կամ պետք է կազմվեն՝ ընդգրկելով շարքում նստած հինգ անձ և ձևավորվեն որպես թիմ՝ խմբային քննարկումների համար: Խմբերին անհրաժեշտ ցուցումներ տալ իրենց առջև դրված նդրի վերաբերյալ՝ ներառյալ թեմայի քննարկման, բանավեճին կամ դերախաղին պատրաստելու համար հատկացված ժամանակի և խմբի գործունեության (օրինակ՝ անհրաժեշտ է ընտրել քննարկումը վարող և զեկուցող, ով պետք է քննարկումների արդյունքների մասին զեկուցի բոլոր մասնակիցներին): Խմբերին անհրաժեշտ է զգուշացնել , որպեսզի նրանք քննարկումներն այնպես կազմակերպ, որ ուժեղ մասնակիցները չգերակայեն, և յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունենա արտահայտվել: Այս նպատակին հասնելու պարզ միջոց է սահմանափակ քանակությամբ խոսելու հնարքի կիրառումը , որը նշանակում է խմբի մասնակիցներից յուրաքանչյուրին հինգ անգամ խոսելու հնարավորություն ընձեռում ՝ խմբում քննարկումները վարողի կողմից: Յուրաքանչյուր անգամ խոսելիս մասնակիցը նվազեցնում է իրեն տրամադրած հնարավորություններից մեկը: Հիմգ անգամ խոսելու հնարավորություն ստանձնած անձն այլևս չի կարող խոսել:

4. Եռյակներ: Եռյակները (աշխատանք երեք անձից բաղկացած խմբերում) կարող են օգտագործվել որոշակի վարժություն կատարելիս ներգարվվելու նպատակով: Եռյակների մեթոդն օգտագործելիս կարող են կիրառել

հետևյալ քայլերը, օրինակ՝ քաղաքական կուսակցությունների միջև բանավեճի շուրջ մեդիտացիայի համար:

Ամփոփելով վերոգրյալը կարող ենք նշել, որ ռազմարվեստի պատմության դասավանդումը կարևոր նշանակություն ունի, քանի որ նպաստում է սովորողների ռազմական գիտելիքների զարգացմանը, հայրենասիրության և պետական մտածողության բարձրացմանը, ինչը էական նշանակություն կարող է ունենա սովորողի ընդհանուր զարգացվածության վրա:

---

3 <<Իրավունք բոլորի համար>> ծրագիր, մասնագիտական խմբագիր Ն. Կարապետյան, Երևան Գիրքը լույս է տեսել <<Միջազգային համագործակցության գերմանական ընկերություն>> ՍՊԸ-ի (GIZ Gmbh) ֆինանսական աջակցությամբ, Երևան , 2016, էջ 21:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ռազմարվեստի պատմությունը ներառում է մարդկության պատմության կարևոր հատվածը , որի դասավանդումը սովորողների մոտ բարձրացնում է ընդհանուր զարգացվածության մակարդակը: Ռազմական գիտելիքների զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցել Հին Հռոմի մղած պատերազմների փորձի ընդհանրացումը: Ավատատիրության կամ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում պատերազմներն իրենց նպատակներով և մասշտաբներով սահմանափակ էին, և ռազմատեսական միտքը մեծ զարգացում չի ստացել: Կենտրոնացված պետությունների կազմավորման (XV_XVI) ժամանակաշրջանում, երբ սկսվել էր կիրառվել հրազենը , երևան են եկել պատերազմներում և ճակատամարտերում հրազենի օգտագործման տեսություններ: Բուրժուական ռազմական գիտությունն առաջացել է XVIII դարում և նրա հիմքերը ձևավորել են հիմնականում ֆրանսիական հեղափոխության ընթացքում: Ռազմական գիտություն, ռազմագիտություն կամ գիտություն պատերազմի մասին, գիտության մի բնագավառ է, որն իրենից ներկայացնում է պետությունների, պետությունների դաշնախբերի կամ դասակարգերի կողմից՝ քաղաքական նպատակներին հասնելու համար պատերազմի նախապատրաստման և վարման վերաբերյալ գիտելիքների համակարգ. Ռազմական գիտությունը հանդիսանում է ռազմական գործի բաղկացուցիչ մասերից մեկը: Ռազմական ռազմավարություն կամ կամ ռազմական ստրատեգիա (ռազմավարական արվեստի տեսություն)-գիտություն է համամաշխարհային մասշտաբով ռազմական գործողությունների (պատերազմի) վարման մասին, ռազմարվեստի մասին, ռազմարվեստի բնագավառներից մեկը. ընգրկում է զինված ուժերի, դրանց տեսակների, զորատեսակների (ուժերի) և հատուկ զորքերի զանազան զորամիավորումների (բրիգադ,դիվիզիա, բանկային կորպուս), զորամասերի (նավերի) և ռազմական ստորաբաժանումների կողմից, ցամաքում, օդում, ու ծովում և տիեզերքում մարտի նախապատրաստման և վարման պրակտիկան: Հետևաբար դպրոցում սովորողների ռազմական գիտելիքների բարձրացման և ռազմական դաստիարակության տեսանկյունից կարևոր

նշանակություն ունի ռազմարվեստի դասավանդումը: Ռազմարվեստի պատմության դասավանդման համար առաջարկում ենք մեթոդների կիարռումը:

1. Մտքի գրոհ: Մտքի գրոհը մասնակիցների գաղափարների ազատ արտահայտումը խթանելու միջոց է: Այն ուսուցման կարևոր եղանակ է, քանի որ խրախուսում է մասնակիցներին նոր գաղափարներ արտահայտել՝ առանց քննադատության ենթարկվելու վախի: Մտքի գրոհի ընթացքում դասավանդողն առաջարկում է մասնակիցներին հնարավորինս շատ մտքեր արտահայտել ՝ այդ մտքերի վերաբերյալ գրառումներ կատարելով գրատախտակի վրա:
2. Դասակարգման վարժություններ: Դսակարգման վարժությունների շրջանակում մասնակիցները կատարում են ընտրություն՝ մի քանի մրցող այլընտրանքային տարբերակներից: Դասը կարող է օգտագործել մտքի գրոհի արդյունքում մասնակիցների մտքերի հիման վրա կազմված ցանկը կամ մասնակիցներին տրամադրել դասակարգման ենթակա այլ ցանկ, որը ներառում է, օրինակ՝ դասակարգման ենթակա 5 կամ 10 տարր:
3. Քննարկում փոքր խմբերում: Փոքր խմբերում քննարկումները պետք է մանրակրիտ կերպով նախապատրաստվեն ՝ դրանց անցկացման կարգի և հատկացված ժամանակի մասին հստակ ուղեցույցների հիման վրա: Խմբերը, սովորաբար, պետք է բաղկացած լինեն մինչև հինգ անձից, որպեսզի ապահովված լինի մասնակիցներից յուրաքանչյուրի խոսելու հնարավորությունից:
4. Եռյակներ: Եռյակները (աշխատանք երեք անձից բաղկացած խմբերում) կարող են օգտագործել որոշակի վարժություն կատարելիս՝ բոլորին ներգրավվելու նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մնացական Ռ. Խաչատրյան: Արցախի 2016թ. Ապրիլյան քառօրյա պատերազմը և պատերազմների էվոլյուցիան: Մասն Ա:<<Անդին>’> ամսագիր, 2016, հ.4
2. Внутрешкольное управление: вопросы теории и практики /Под ред.Т.И. Шамовой. М.: Педагогика, 1991
3. Дьяченко В.К. Сотрудничестяо в обучении :о коллективном способе учебной работы.М. : Просвещение. 1991
4. Зверева В. И. Организационно-педагогическая деяательность руководителя школыМ.: Новая школа, 1997
5. Загвязинский В. И. Методология и методика социально-педагогического иследования: Тюмень: ТГУ, 1995
6. Тухаеяский М. Н., Война как проблма вооруженной борьбы, Избр. Произв., т. 2, М., 1994